

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ կառավարության 2014 թվականի գերակա խնդիրների և գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման 2-րդ կիսամյակի արդյունքների մասին (սեղմագիր)

#### **1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում**

ՀՀ մարզերում, Երևան քաղաքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում և 6 շրջաններում 2014 թ. հունիսի 1-15-ը 11-րդ անգամ անցկացվեց ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի 1-ին փուլը, որին մասնակցեցին 61 համայնքների 2067 ընտանիքներ: Համաձայն ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2013 թ. բանավոր հանձնարարականի՝ 2014 թ. մրցույթի ծրագրում ընդգրկվեցին հաշմանդամություն ունցող ընտանիքները (մասնակցեցին 16 հաշմանդամ ընտանիքներ): Մրցույթի 2-րդ փուլը 732 ընտանիքների մասնակցությամբ անցկացվեց հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ը, Եզրափակիչ փուլը՝ հուլիսի 21-27-ը՝ Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում, որտեղ ներկա էր ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը: Եզրափակիչ փուլում մասնակցեցին 144 ընտանիքներ՝ 480 մարդ: Միջոցառման մասնակից ընտանիքները պարգևատրվեցին ՀՀ Նախագահի պատվոգրերով և դրամական մրցանակներով: Դրամական մրցանակներով պարգևատրվեցին նաև առանձին մարզաձևերում մրցանակային 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած ընտանիքները և թիմերը:

#### **2. «ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրման, մարզային հասարակական կազմակերպությունների գործունեության խթանման, ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագիրը և ծրագրի միջոցառումները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

#### **3. «Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի «Պետական երիտասարդական

քաղաքականության հայեցակարգի մասին» № 798 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (որն ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1489-Ն որոշմամբ) և «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

#### **4. Երիտասարդական պետական քաղաքականության մշակման շրջանակներում երիտասարդության մասնակցային գործընթացների խթանում և ինստիտուցիոնալ հիմքերի զարգացում**

1. Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման և «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի № 798 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

2. Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագիրը և ծրագրի միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

#### **5. Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի դերի կարևորում և տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում**

Գերակա խնդրի իրականացման համար մշակվել և կազմվել է «Սպորտլանդիա-2014» զանգվածային մարզական միջոցառման ծրագիրը:

ՀՀ մարզերում և Երևանի 12 վարչական շրջաններում իրականացվել է «Սպորտլանդիա-2014» զանգվածային մարզական միջոցառումը՝ նախադպրոցական տարիքի երեխաների և 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում: Միջոցառմանը մասնակցել են շուրջ 5964 նախադպրոցական և դպրոցահասակ երեխաներ:

Մշակվել է սոցիոլոգիական հետազոտության հարցաթերթիկ՝ ՀՀ մարզերում նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ըստ նախասիրության տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման նպատակով:

2014 թվականին անցկացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը: Մրցույթին մասնակցել են 2083 ընտանիքներ, որոնց մեջ ընդգրկված էին նաև 6-12 տարեկան 1723 երեխաներ: Այս մրցույթը ևս կնպաստի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի դերի կարևորմանը և տարբեր մարզաձևերով մարզվելու նրանց կողմնորոշման ձևավորմանը: